23207

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

I

# ԾՐԱԳԻՐ

## 1930 ԹՎԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

II

# ԾՐԱԳԻՐ

## ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ԱՐԴՖԻՆՊԼԱՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԽ-Ի

ՅԵՐԵՎԱՆ—1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 4596
ԳՐԱՌԵՊԳԼԽ. 5833 (բ).
ՏԻՐԱԺ 5000

331.11
Ծ-98
15 JAN 2010

# ԾՐԱԳԻՐ

## 1930 ԹՎԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

1. Հավաքական պայմանագրերի մասսայական ըստուգումը պետք է անցկացվի վորպես տնտեսա-քաղաքական լայն կամպանիա, վոր նպատակ կունենա մասսաների մասնակցությամբ և ոժանդակությամբ ստուգելու,—

ա) ինչպես են կատարվում կնքված պայմանագրերով յերկու կողմերի փոխադարձ պարտավորությունները.

բ) տնտմարմինների պարտավորությունները բանվորների և աշխատանքային պայմանները բարելավելու ուղղությամբ.

գ) բանվորների և պրոֆկազմակերպությունների պարտավորությունները՝ արդֆինպլանների կատարման համար.

դ) աշխատանքի արտադրողականությունը վորոշ աստիճանի վրա ապահովել.

յե) աշխդիսցիպլինան և աշխատանքի վորակի խնդիրները:

2. Ստուգումն անցկացնելու համար, պետք է մա-

15 MAY 2015

բելիգացիայի յենթարկել ստորին գործար-տեղկոմական կազմակերպություններին, ճարտարապետ-տեխնիկական աշխատողներին, պատի և տպագրական թերթերի խմբկոններին ու բանթղթակիցներին:

Ձեռնարկության, ակումբի, կարմիր անկյան և հանրակացարանների ամբողջ աշխատանքները գերազանցապես պետք է հարմարեցված լինեն ստուգումն սպասարկելու համար: Անհրաժեշտ է, վոր ստուգման սկզբից և եթ բանվորական վողջ մասսայի ուշադրությունը բևեռված լինի հավաքական պայմանագրերի ստուգման շուրջը և յերբեք այդ ուշադրությունը չթուլանա ստուգման տևողության ամբողջ ընթացքում:

3. Հավաքական պայմանագրերի անմիջական ըստուգումն անցկացնելու համար, յուրաքանչյուր ձեռնարկ-հիմնարկում կազմակերպվում է կամավոր բանվորական բրիգադ, հետևյալ բաժանումներով՝

ա) աշխդիսցիպլինայի դրությունը և աշխատանքի արտադրողականությունը.

բ) արտադրանքի վորակը և ինքնարժեքի իջեցումը.

գ) տնտմարմնի կողմից հավաքական պայմանագրի պարտավորությունների կատարումը— վարձելու, արձակելու, տեղափոխելու և առաջ քաշելու ուղղությամբ:

դ) հանգստի, աշխպաշտպանության, անվտանգության և բանվորական ժամանակի հարցերը.

ե) աշխատավարձի, արտադրանքի նորմաների և գնահատումների հարցերը.

զ) բանվորական առաջարկությունների կատարումը, նրանց հաշվառումը և կուլտ-կենցաղային պարտավորությունները:



Այն ձեռնարկներում, ուր կան ցեխեր, բաժիններ և հերթեր, կազմակերպվում են համապատասխան բրիգադներ— ցեխային, հերթային և այլն:

Մեծ ձեռնարկներում, անհրաժեշտության դեպքում, կազմակերպվում են ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ (ժ. վ. հ.)՝ աշխատանքի վորակի և ինքնարժեքի իջեցման ստուգման ուղղությամբ:

Բանբրիգադների կազմի քանակը կապված է ձեռնարկության (ցեխի, հերթի) մեծության և բրիգադում ցուցակագրված բանվորների թվի հետ, յելնելով այն տեսակետից, վոր ստուգման աշխատանքներին պետք է մասնակից անել բանվորության մեծամասնությունը:

Ձեռնարկում բրիգադը կազմվում է հարվածայիններից, ընդգրկելով կուս., ԼԿՑԵՄ, պրոֆակտիվին, ինչպես նաև տնտեսական և ճարտարապետ-տեխնիկական աշխատողներին:

Յուրաքանչյուր բրիգադ իր կազմից առաջադրում է ղեկավար (բրիգադի ավագ):

4. Ստուգումն անցկացնելու, նրա նպատակների, մեթոդների և ստուգող բրիգադներ կազմակերպելու հարցը նախապես դրվում է գործարկոմների լայնացրած պլենումների նիստին, մասնակցությամբ պրոֆակտիվի և հարվածայինների, ուր միաժամանակ լուծվելու յեն կազմակերպչական հարցերը, վորոնք կապված են ըստուգման հետ (բրիգադների քանակը, ծրագրերը և որացուցային ժամկետները): Այնուհետև գործարկոմները, ցեխպրոֆբյուրոները, ցեխլիազորները կազմակերպում են բանբրիգադներ՝ կամավոր ցուցակագրության հիմունքներով: Միաժամանակ ցեխերում, բաժիններում, հերթերում (ամենա) և ճաշի ընդմիջման ժամանակ անց է կացվում բացատրական աշխատանք ըս-

ստուգման նշանակության և կազմակերպչական ձևերի մասին: Բացատրական աշխատանքներից հետո, կատարվում է կամավոր վերբովկա ստուգող բրիգադների համար:

5. Ստուգող բրիգադներ կազմակերպելուց հետո, գործարկոմն անմիջապես հրավիրում է բրիգադներին, հրահանգում է նրանց և նրանց հետ միասին կազմում է ինքնաստուգման ծրագիրը (հարցացուցակ), համակերպելով այդ տվյալ ձեռնարկության և բրիգադի յուրահատուկ խնդիրներին, որից հետո բրիգադը կատարում է աշխատանքի բաժանում իր ներսում, ըստ հարցերի առանձին խմբերի:

6. Ստուգող բրիգադների աշխատանքներն անց են կացվում ձեռնարկությունում յեղած նյութերի հետ ծանոթանալով՝ տարիֆ-չափավորման բյուրոյի, ԳԿՀ-ի, գրույց բանվորների հետ, խորհրդակցություններ բանվորական առանձին խմբակների հետ և այլն:

Բանվորների կողմից վերցված պարտավորությունների կատարման ստուգման համար անհրաժեշտ է լայն կերպով օգտագործել սոցմրցման և հարվածայնության մասսայական ինքնաստուգման նյութերը, որ չկատարվեն ավելորդ, կրկնակի աշխատանքներ:

7. Ինքնաստուգման բրիգադների հրահանգման և ծրագրի կազմելու ժամանակ անհրաժեշտ է գիծ վերցնել, որ ստուգող բրիգադները ոչ միայն արձանագրեն նվաճումներն ու թերությունները, այլ և հատկապես ստուգման աշխատանքների ընթացքում միաժամանակ կատարվեն պարտավորությունների այն կետերը, որոնք չեն կիրառված, դրսեվորվեն չկատարելու կոնկրետ պատճառները և նրանց վերացնելը, հայտաբերվեն հանցավոր ադմինիստրատորները, որոնք չեն կատարել



իրենց պարտավորությունները, և հարց հարուցվի այդպիսիներին պատասխանատվության յենթարկելու մասին:

Հավաքական պայմանագրերի ստուգման ընթացքում պետք է յերևան հանել գործարկոմի դերը, թե ինչ չափով գործարկոմը և ցեխբյուրոն պայքարել են պայմանագրի խախտումների դեմ և ինչով են ապահովել պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կիրառումը՝ արդֆինպլանների կատարման համար:

8. Բրիգադի յուրաքանչյուր անդամ ստուգման ընթացքում սեղմ կերպով արձանագրում է հայտաբերված և իր կողմից կատարած աշխատանքները և ստուգումն ավարտելուց հետո հանձնում է իր բրիգադի ղեկավարին:

Ղեկավարը պարտավոր է ստուգել և կարգավորել բրիգադի յուրաքանչյուր անդամի աշխատանքների ընթացքը և արդյունքները և վերացնել աշխատանքի պայմանները դժվարացնող մոմենտները:

Բրիգադի բոլոր անդամների աշխատանքներն ավարտելուց հետո, ավագ բրիգադիրը հրավիրում է բրիգադի ժողով, ուր մտքերի փոխանակության և անդամների ներկայացրած արձանագրությունների հիման վրա կազմվում են բրիգադի յեզրակացությունները՝ ստուգման արդյունքների մասին, որից հետո նյութերն ու յեզրակացությունները հանձնվում են գործարկոմին:

Բոլոր բրիգադների աշխատանքներն ավարտվելուց հետո, գործարկոմը կազմում է ստուգման կամպանիայի մասին ընդհանուր զեկուցում (ընթացքի, յեզրակացությունների և արդյունքների մասին) և տեղափոխում է համագործարանային ընդհանուր ժողովը կամ կոն-

(ցույց տալ հարգելի և վոչ հարգելի պատճառները զատ-զատ), դադարի հետևանքով և կանգնած լինելու հետևանքով (զատ—զատ)։

6. Վոչ հարգելի պրոգուլների պատճառները (հարբեցողություն, աշխատանքը դրսում, տոնից հետո աշխատանքի դուրս չգալ, հերթական արձակուրդից հետո և այլն)։

7. Աշխդիսցիպլինայի խախտման հետևանքով կոնֆլիկտների թիվը և նրանց քննության արդյունքները ԳԿՀ-ում։

8. Ի՞նչպես է կատարված և քա՞նի տոկոսով աշխատանքի արտադրողականության աճումը, չկատարելու պատճառները՝

ա) դադար հումույթի և նյութերի անկանոն հայթայթումից.

բ) գնահատումների և արտադրանքի նորմաների վերանայման նախորյակին աշխատանքի արտադրողականության արհեստական իջեցման դեպքեր.

գ) աշխատանքի ուժը վոչ լրիվ օգտագործում։

9. Բանվորների թափթփվածության և անդիսցիպլինարության թագցնելու դեպքեր ադմինիստրացիայի կողմից։

10. Գործարկոմի և ԳԿՀ-ի կողմից աշխդիսցիպլինայի ակնհայտ խախտողներին և պրոգուլշչիկներին

պաշտպանելու դեպքեր։

11. Աշխդիսցիպլինայի և արտադրողականության
բարձրացման [illegible]

## II ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՈՒՄԸ ՑԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ

1. Ի՞նչ չափով է իջեցված արտադրանքի ինքնարժեքը, համեմատած ծրագրի և սոցմրցման պայմանագրի հետ։

2. Արդյոք չի՞ ազդել ինքնարժեքի իջեցումն արտադրանքի վորակի վրա։

3. Կալկուլյացիայի վո՞ր էլեմենտների հաշվին է կատարված ինքնարժեքի իջեցումը և համապատասխանո՞ւմ է այդ ծրագրային տվյալներին։

4. Հիմնարկության կից կա՞ վորակի բարձրացման բջիջ, և գործարկոմի դերն այդ բջիջում։

56 Կա՞ն հատուկ բրակովշչիկներ և ի՞նչպես է կազմակերպված գործարանի ներսում արտադրանքի վորակի հսկողությունը հիմնական ցեխերում, վորպեսզի բրակ կիսաֆաբրիկատը չանցնի մշակման հետևյալ շրջանները։

6. Ի՞նչ տոկոսով է իջեցված բրակը, համեմատած անցյալ տարվա հետ, և ի՞նչ չափով է ոժանդակել բրակի իջեցմանը բանվորական նախաձեռնությունը։

7. Ի՞նչպես են քաջալերվել անտամարմինների կողմից այն բանվորները, վորոնք բարձրացրել են արտադրանքի վորակը և գործարկոմի ձեռք առած միջոցները այդպիսիների նյութական չահագրգռվածությունն ապահովելու գործում։

## III ՎԱՐՋԵԼՈՒ՝, ԱՐՁԱԿԵԼՈՒ, ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՑԵՎ ԱՌԱՋ ՔԱՇԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կատարվե՞լ են արդյոք վարձելու պայմաններն ադմինիստրացիայի կողմից։

2. Պայմանագրի գործողության ընթացքում ո՞րքան աշխատակիցներ են ընդունված աշխբորսայից, անկախ բորսայից, այլ մարմինների գործուղումներով, զորացրվածներին տեղավորող հանձնաժողովի միջոցով, խնամիությամբ և այլն:

3. Աշխատողներ վարձելու բոլոր դեպքերի մասին ադմինիստրացիան հայտնե՞լ է գործարկոմին:

4. Նոր ընդունվածների դեմ տեղկոմի կողմից հայտարարված բացարկների քանակը և դրանց արդյունքները:

5. Ի՞նչպես է կատարվում տնտմարմնի կողմից ժամանակավոր բանվորներ վարձելու նորմաների օրենքը:

6. Վարձելու կանոնները խախտելու հետևանքով տնտմարմիններին պատասխանատվության յենթարկելու դեպքեր:

7. Աշխատողներին տեղափոխելու դեպքեր՝ աշխ. վարձի իջեցումով, բարձրացումով կամ նույն աշխ. վարձով:

8. Այդ հողի վրա ծագած կոնֆլիկտների քանակը և դրանց արդյունքները:

9. Հեռացվածների քանակը պայմանագրի գործողության սկզբից և սխալ հեռացումների ու վերականգնումների դեպքերը (դատարանի միջոցով կամ առանց դատի):

10. Ավելի բարձր պաշտոնների առաջքաշված բանվորների քանակը, տվյալ ձեռնարկության մեջ:

11. Յեղե՞լ են գործարկոմի կողմից պահանջներ բանվորներին բարձր պաշտոնների տեղափոխելու մասին և քա՞նիսն են դրանցից կատարված կամ մերժված և ի՞նչ պատճառաբանություններով:



## IV. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ, ՀԱՆԳՍՏԻ ՅԵՎ ԱՇԽՈՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ի՞նչպես են կատարվում ադմինիստրացիայի կողմից պայմանագրերը՝ հերթական և լրացուցիչ արձակուրդներ տրամադրելու գործում—թե հասակավորներին և թե անչափահասներին:

2. Բանվորական օրվա յերկարացնելու դեպքեր տեղի ունեցե՞լ են և ինչի՞ց դրդված:

3. Արձակուրդները նատուրայով հատուցելու փոխարեն արդյոք յեղե՞լ են մասսայական դեպքեր՝ բավարարելու այդպիսիք դրամական փոխհատուցումով:

4. Կատարված աշխատանքի մարդ—ժամերի քանակը և դրա ո՞ր մասն է կազմում արտաժամյա աշխատանքը:

5. Արտաժամյա աշխատանքները կատարվել են տեխտեսչության և գործարկոմի գիտությամբ, թե՞ ոչ և ի՞նչ միջոցներ են ձեռք առնված վերջինների կողմից:

6. Ո՞րքան դեպքեր են յեղել, յերբ աշխատակիցները հրավիրվել են աշխատանքի իրենց հանգստի օրերին, քա՞նի դեպք համաձայնեցված է գործարկոմի հետ և քանի՞սը ոչ:

7. Արտաժամյա և հանգստի օրերի աշխատանքների սխալ վարձատրման դեպքերի թիվը, և ի՞նչ միջոցների յե դիմել գործարկոմը՝ ճիշտ վարձատրելու համար:

8. Յեղե՞լ են դեպքեր, յերբ տնտմարմինը կանչվել է պատասխանատվության՝ բանվորական ժամանակի նորմաները և հանգիստը խախտելու համար և ի՞նչ հետևանքներ են տվել:

9. Կատարվա՞ծ են արդյոք ադմինիստրացիայի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ աշխատանքի պայմանները բարելավելու (լվացարաններ, վենտիլյացիա և այլն) և աշխատանքի անվտանգությունը կանոնավորելու ուղղությամբ (մեքենաների ցանկապատում, գործիքների սարքավորում և այլն):

10. Դրամական հատկացումների ծախսումներն արդյոք ծառայո՞ւմ են իրենց ուղղակի նպատակին և ժամանակին, որպիսիք նախատեսված են տրդֆինպլաններով աշխպաշտպանության համար:

11. Պայմանագրով նախատեսված մասնագիտական սնունդը, հագուստը և մյուս չեզոքացնող պարագաները տրվո՞ւմ են արդյոք ժամանակին և յեղե՞լ են այդպիսիների դրամով հատուցման դեպքեր:

12. Ի՞նչ վիճակում է աշխպաշտպանության ընդհանուր դրությունը տվյալ ձեռնարկում, ո՞րքան դժբախտ պատահարներ են յեղել աշխպաշտպանության միջոցների բացակայության հետևանքով:

13. Հետևո՞ւմ է արդյոք Աշխտեսչությունն աշխպաշտպանության նորմաների կատարմանը: Ի՞նչ միջոցներ է ձեռնարկել գործարկոմը՝ բանվորական մասսաներին աշխպաշտպանության գործում ներգրավելու համար:

## V. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐ ՅԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

1. Աշխվարձի ժամանակին չվճարելու դեպքեր և գործարկոմի ձեռնարկած միջոցները:

2. Աշխվարձի սխալ վճարումների հողի վրա ծագած կոնֆլիկտների թիվը (չի համապատասխանել



պայմանագրին կամ սխալ հետգանձումներ են յեղել) և դրանց հետևանքները:

3. Արտադրանքի նորմաների և գնահատումների վերանայման մասին դիրեկտիվները կատարվա՞ծ են, թե ոչ, և ի՞նչ չափով են ազդել աշխվարձի վրա:

4. Արտադրանքի նորմաների և գնահատումների սխալ կիրառման հետևանքով ծագած կոնֆլիկտների թիվը և նրանց արդյունքները:

5. Պայմանագրով նախատեսված կետերը հանգստի և տոն օրերի նախօրյակի մասին արդյոք պահպանվե՞լ են (այնտեղ, ուր չկա անընդհատ շաբաթ): Նույնը՝ գիշերային ժամանակի, հանգստյան օրերի և տոների նկատմամբ:

6. Անչափահասների վարձատրման նկատմամբ ի՞նչպես է կատարվում պայմանագիրը (որոնք աշխատում են գործարքով) և ի՞նչպես են վարձատրվում աշակերտները, որոնք կատարում են ինքնուրույն աշխատանք (աշակերտական թե բանվորական ցանցով):

7. Պահպանվե՞լ են արդյոք բրակի և դադարի վարձատրման կարգն ու պայմանները:

8. Կատարվե՞լ է արդյոք պայմանագրի այն մասը, որ վերաբերում է գործարքայիններին սպասարկող բանվորներին:

## VI. ԿՈՒԼՏ—ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

1. Կատարվե՞լ են արդյոք ադմինիստրացիայի կողմից կուլտկենցաղային հարցերին վերաբերող պարտավորությունները՝

ա) կուլտֆոնդի ժամանակին հատկացնելը.

բ) բնակշինարարության ծրագրի կատարումը, բանվորներին բնակարան տրամադրելը.

դ) վորակավորման համար դասընթացներ կազմակերպելը, էքսկուրսիաներ ուղարկելը, Փաբգործուսի դպրոցներ բաց անելը և այլն:

Գործարկոմի ձեռք առած միջոցները տնտմարմինների հանդեպ՝ հիշյալ պարտավորությունները կատարելու համար:

---



36418

# ԾՐԱԳԻՐ

## ՀՆԳԱՄՅԱԿԻ 3-ՐԴ ՏԱՐՎԱ ԱՐԴՖԻՆՊԼԱՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Հնգամյակի առաջին տարվա հանրագումարը և յերկրորդ տարվա նախնական հանրագումարներն ակներև կերպով ցույց տվին, վոր վոչ միայն կենսունակ և ռեալ է ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը, այլև այն, վոր միանգամայն հնարավոր է նրա կատարումն ավելի կարճ ժամանակում:

Վերջինիս կապակցությամբ, սակայն, 3-րդ տարվա պլանային նշումներն իրենցից ներկայացնում են այնպիսի առաջադրություններ, վորոնց կատարումը հնարավոր է միմիայն այն դեպքում, յերբ ե՛լ ավելի կուժեղանա աշխատանքային վերելքը, յերբ ե՛լ ավելի կզարգանան սոցմրցումն ու հարվածայնությունը: Այդ պարտականություն է դնում պրոֆկազմակերպությունների վրա լիակատար սպառազինությամբ դիմավորել հնգամյակի յերրորդ տարվան, կազմակերպել բանվորության հանդիպական արդֆինպլանների առաջադրումը տնտեսական մարմիններին, արդֆինպլաններ, վորոնք հիմնված կլինեն ձեռնարկության ամբողջ կոլեկտիվի (հարվածայիններ, ՃՏՍ, գյուտարարներ և այլն) բոլոր արժեքավոր ու կոնկրետ առաջարկությունների վրա:

Պրոֆկազմակերպությունները պետք է մոբիլիզացիայի ենթարկեն մասսաների բոլոր ուժերը և ուշադրությունը 1931 տարվա հանդիպական արդֆինպլանների շուրջը և նրան իսկական տնտեսական–քաղաքական կամպանիայի բնույթ տան:

Այդ պարտականություն է դնում պրոֆկազմակերպությունների վրա մեկ անգամ ևս ստուգման յենթարկել հարվածային ու սոցմրցման յելած բանվորների շարքերը, վերջնականապես վերակառուցել արտադրական խորհրդակցությունների աշխատանքը և ակտիվ կերպով աջակցել 1931 տարվա պլանները ցեխին, բրիգադին, իսկ արտադրական առաջադրությունները անհատ բանվորին հասցնելու գործին, այնպես, վոր այդ նպաստի հնգամյակի յերրորդ տարվա արդֆինպլանի կատարմանն ու գերակատարմանը:

1931 տնտեսական տարվա կոնտրոլ թվերի մշակումը, ի տարբերումն անցյալ տարիների, անցկացավ բանվորական լայն մասսաների մասնակցության նշանի տակ, բայց և այնպես մշակման պրոցեսում յեղան մի շարք բացեր ու թերություններ, ինչպիսիք են՝ բանվորական մասսաների անբավարար ընդգրկումը մշակման աշխատանքների մեջ, նրանց առաջարկությունների վոչ լրիվ հաշվառումը, տեղ–տեղ նույնիսկ հարցի ձևական քննարկումը, առանց նախնական մըշակման:

Նպատակ ունենալով լայն մոբիլիզացիայի յենթարկել 1931 տարվա պլանային առաջադրությունների կատարման ու գերակատարման բոլոր հնարավորությունները և լայնորեն մշակել կոնտրոլ թվերը ցեխերում, հերթերում և խմբակներում՝ անհրաժեշտ է մինչև նոյեմբերի 15-ն անցկացնել հնգամյակի յերրորդ



տարվա հանդիպական արդֆինպլանի մասսայական տնտեսական-քաղաքական կամպանիա:

Հանդիպական արդֆինպլանի իդեան, վոր պատկանում է Լենինգրադի «Կարլ Մարքսի» անվան գործարանին, բանվորական նախաձեռնության մի նոր հոսանք է մտցնում ժողովրդական տնտեսության պլանավորման հարցերի մեջ և առաջադրում տնտեսական պլանների մշակման ու կազմության գործին մասսաների ել ավելի գործոն մասնակցության նորանոր ձևեր:

Բանվորական մասսան, մշակման յենթարկելով տվյալ ձեռնարկության կամ տվյալ արտադրության կոնտրոլ թվերը և հիմնվելով իր ունեցած վիթխարի արտադրական փորձի վրա, յերեվան է հանում արտադրական նոր հնարավորություններ տվյալ արտադրությունն ել ավելի զարգացնելու ու ընդարձակելու, արտադրանքն ավելացնելու, ինքնարժեքն ել ավելի իջեցնելու, վորակը լավացնելու և այլ խնդիրներում:

Պրոֆկազմակերպությունները, ընդհանրացնելով բանվորների առանձին կոնկրետ ու արժեքավոր առաջարկություններն արտադրության ծավալման վերաբերմամբ, առաջադրում են տնտեսական մարմիններին հանդիպական, արտադրական նոր ցուցանիշներ՝ տվյալ ձեռնարկության արդֆինպլանի մեջ մտցնելու համար:

Հանդիպական արդֆինպլանը կազմակերպված ձևով և ամենուրեք անցկացնելու համար, անհրաժեշտ է կատարել հետևյալ ձեռնարկումները.

1. Պրոֆմիութենական ակտիվին հանդիպական արդֆինպլանի խնդիրներին ծանոթացնելու և տեղերի հետագա աշխատանքներին նախապատրաստելու համար, միությունների կենտրոնական վարչությունները

և շրջանային պրոֆխորհուրդները պետք է հրավիրեն պրոֆակտիվի լայն ժողովներ, վորոնց պետք է մասնակցեն՝ կենտվարչությունների, շրջանային պրոֆխորհրդների, գործարկոմների և արդյունաբերական կոմիտեների անդամները, ՃՏՄ–ի կենտրոնական ու տեղական բյուրոները, հարվածայինները, գյուտարարները և տպագիր ու պատի թերթերի բանթղթակիցները: Այդ նույն ժողովներում քննության է առնվում կամպանիայի կազմակերպման ու անցկացման պլանը:

2. Ձեռնարկություններում հրավիրել գործարկոմների արտակարգ նիստեր, ակտիվի հետ միասին, քննության յենթարկելու համար հանդիպական արդֆինպլանի անցկացման հետ կապված հարցերը: Այդ նույն նիստերում լավագույն հարվածայինների շարքերից առանձնացվում են ավագ բրիգադիրներ, վորոնց հանձնարարվում է բանվորներ համախմբել բրիգադներում, բացառապես կամավորության սկզբունքների վրա հիմնվելով: Բրիգադների մեջ բանվորներ համախմբելիս գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել հարվածայինների ու գյուտարարների ներգրավման վրա:

3. Գործարանեղկոմների առաջին նիստում պետք է վորոշել բրիգադների թիվը, ըստ վորում անհրաժեշտ է կազմակերպել 5 բրիգադ՝ հետևյալ հինգ հարցերի ուսումնասիրության համար.

ա) 1931 տարվա արդֆինպլանի մշակման և բանվորների ու գյուտարարների առաջարկությունների հավաքման.

բ) արդֆինպլանները ցեխին ու բրիգադին, իսկ



արտադրական առաջադրությունները անհատ բանվորներին հասցնելու.

գ) հարվածայինների ու սոցմրցման մտած բանվորների շարքերում նոր, մինչ այդ չընդգրկված բանվորներ ներգրավելու. փոխադարձ ոգնության բրիգադների կազմակերպում, հարվածայինների առկա շարքերի ստուգում, լավագույն հարվածայինների, լավագույն բրիգադների ու անհատ հարվածայինների անջատումը պարգևատրման համար, սոցմրցման ու հարվածայնության եֆեկտավորության ստուգում.

դ) կորուստների դեմ պայքարելու և առաջին ինքնաստուգման ժամանակ բանվորների կողմից այդ ուղղությամբ արած առաջարկների կատարումն ստուգելու.

ե) աշխդիսցիպլինան բարձրացնելու և բանվորներին արտադրությանն ամրացնելու:

Ծանոթություն.—Այն ձեռնարկություններում, վորտեղ 1929-30 տարվա արդֆինպլանների մեջ ճեղքվածքներ են առաջացել, յերկրորդ բրիգադի ծրագրի մեջ մտցվում է նաև ճեղքվածքի վերացման հարցը:

4. Այն ձեռնարկություններում, վորտեղ ցեխեր և հերթեր կան, կազմակերպվում են ցեխային և հերթային բրիգադներ:

5. Բրիգադներում կամավորներ հավաքագրելիս, պրոֆկազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն նաև տնտեսավարներին ինժեներ-տեխնիկական աշխատավորներին և բանթղթակիցներին ներգրավելու վրա, ինչպես նաև ապահովեն յերիտասարդության մասնակցությունն այդ աշխատանքին:

6. Բրիգադները կազմակերպելուց անմիջապես հե-

տո գործարկոմները հրավիրում են բրիգադների մեջ ընդգրկված բոլոր կամավորների ժողովներ, նրանց հըրահանգներ տալու նպատակով, վորտեղ և ձևակերպում են յուրաքանչյուր բրիգադի պլանը, վորից հետո ավագ բրիգադիրն աշխատանքի բաժանում է կատարում համապատասխան բրիգադների մասնակիցների միջև:

7. Նպատակ ունենալով լիովին ընդգրկել բանվորական մասսային անցկացվող կամպանիայի մեջ՝ պրոֆկազմակերպությունները պետք է լայն բացատրական աշխատանք տանեն ցեխերում, հերթերում, խմբակներում, ընդմիջումների ժամանակ 1931 տարվա հանդիպական արդֆինպլանի նշանակության մասին թռուցիկ միտինգներ կազմակերպելու միջոցով, վորտեղ կոչ պետք է անեն բանվորներին ակտիվ մասնակցություն բերելու այս կամպանիային, ինչպես նաև 100 տոկոսով բաժանորդագրվելու «Հնգամյակը չորս տարում» փոխառությանը:

8. Կամպանիայի հիմնական խնդիրը պետք է լինի—1931 տարվա կոնտրոլ թվերի մասսայական մշակումը և կոնտրոլ թվերի վերաբերմամբ բանվորների ու գյուղացիների առաջարկությունների հավաքումը: Մինչև հոկտեմբերի 1-ը հրավիրվում են բանվորական ժողովներ ըստ ցեխերի, հերթերի, խմբակների, վորտեղ դրվում են տնտեսական մարմնի զեկուցումները՝ 1931 տարվա արդֆինպլանի առաջադրությունների մասին, ինչպես նաև գործարկոմի հարակից զեկուցումը՝ տվյալ ձեռնարկության սոցմրցման ու հարվածայնության վիճակի մասին: Զեկուցումներից հետո բանվորների առաջադրած նյութերով հանդես են գալիս բրիգադները: Բանվորների բոլոր արժեքավոր ու կի-



րառելի առաջարկությունները, բրիգադների միջոցով բանվորական ժողովների կողմից մշակման յենթարկվելուց հետո, տրվում են տնտեսական մարմնին կոնտրոլ թվերի մեջ մտցնելու համար:

Բանվորների այն առաջարկությունները, վորոնք խոշոր գումարներ միջոցներ ու յերկար ժամանակ չեն պահանջում կատարման համար, պետք է կենսագործվեն հենց կամպանիայի ընթացքում:

9. Նպատակ ունենալով լայն ծանոթացնել բանվորությանը 1931 տարվա կոնտրոլ թվերի հետ, պրոֆկազմակերպությունները չպետք է բավականանան միայն տնտեսական մարմնի ընդհանուր զեկուցումով, այլ պետք է կամպանիայի ընթացքում կազմակերպեն տնտեսավարների մի շարք զրույցներ բանվորների հետ՝ արդֆինպլանի առանձին բաժինների շուրջը, ինչպիսիքն են՝ աշխատանքի արտադրողականությունը, ինքնարժեքի իջեցումը, արտադրության ռացիոնալացումը, աշխատանքի պաշտպանությունը և այլն:

10. Կամպանիայի ընթացքում պրոֆկազմակերպությունների հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում մոբիլիզացիայի յենթարկել ու ակտիվացնել մասսաներին 1931 տարվա արդֆինպլանի շուրջը, իսկ այդպիսի դրությունը հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ յուրաքանչյուր բանվոր կիմանա իր արտադրական առաջարկությունը, ուստի և պրոֆկազմակերպությունները պետք է ամբողջ վճռականությամբ ձգտեն ապակենտրոնացնելու արտադրական առաջար-

դֆինպլանի բոլոր ցուցանիշների

նելով ցեխին, բրիգադին և անհատ

Վորումները (ԺՏԽ, Հայպղենձ և



կությունն

այլն) այդ հարցում գործնական աջակցություն պետք է ցույց տան ձեռնարկություններին, հատուկ աշխատավորների առանձնացնելով ինժեներա-տեխնիկական անձնակազմի ապարատից և նրանց ստորին օղակները փոխադրելով։

Պրոֆկազմակերպությունները պետք է վճռական պայքար հայտարարեն այս կարևոր հարցի իրագործումը ձգձգելու ամեն տեսակ փորձերի դեմ, վորպիսիք կլինեն առանձին տնտեսավարների կողմից, ինչպես նաև այս կամ այն ձեռնարկության սպեցիֆիկ պայմաններին վերաբերող խոսակցությունների դեմ, վորոնք խոչընդոտ են հանդիսանում այս դիրեկտիվի կատարմանը, ըստ վորում պլանը բանվորին հասցնելու պատասխանատվությունն ընկնում է նաև միութենական կազմակերպությունների վրա։

11. «Յերեսներս դեպի արտադրություն» լոզունգը նշանակում է բանվոր դասակարգի հոծ մասսաների մոբիլիզացիա, հանուն սոցիալիստական վերակառուցման խնդիրների կատարման։

«Դեպի արտադրություն շրջադարձ կատարելը նշանակում է պրոֆմիությունների միջոցով կոնկրետ կերպով ղեկավարել բանվոր դասակարգի մեծագույն վերելքը, սոցմրցումն ու հարվածայնությունը՝ հանուն աշխատանքի սոցիալիստական դիսցիպլինայի բարձրացման, հանուն աշխատանքի արտադրողականության ավելացման և արտադրանքի վորակի լավացման» (ընկ. Շվերնիկի զեկուցումից 16-րդ կուսհամագումարում)։

1931 տարվա արդֆինպլանի կատարման ու գերակատարման յերաշխիքը պետք է հանդիսանա սոցմրցման ու հարվածայնության մաքսիմալ ծավալումը։



վորպիսին լավագույն ցուցանիշն է պրոֆմիութենական աշխատանքի վերակառուցմանը, պրոֆմիությունների շրջադարձին դեպի արտադրությունը։

Հանդիպական արդֆինպլանի կամպանիայի լոզունգներից մեկը պետք է հանդիսանա սոցմրցման ու հարվածայնության պրոֆմիութենական ղեկավարության ուժեղացումը։

Կամպանիայի ընթացքում անհրաժեշտ է ամենայն հոգածությամբ ստուգել հարվածայինների ներկա շարքերը և նրանց հետ սիստեմատիկ աշխատանք սկսել, ինչպես նաև յերևան բերել լավագույն հարվածայիններին, առանձին ցեխերին և խմբերին, վորոնք գնում են առաջին շարքերում պայմանագրերով հանձն առած պարտականությունների կատարման գործում և բանվորական ժողովների միջոցով պարգևատրել նրանց։ Միաժամանակ բրիգադները պետք է յերևան բերեն կեղծ-հարվածայիններին և նրանցից «հարվածային» կոչումը վերացնելու հարցը դնեն ժողովներում։

12. Բոլոր ձեռնարկություններում ամբողջ կամպանիայի ընթացքում ստուգում կատարել, թե ինչ չափով են տնտեսական մարմինները հաշվառման յենթարկում սոցմրցումից և հարվածայնությունից ստացված էֆեկտը։

13. Կենտրոնական վարչությունները բոլոր ձեռնարկություններում ստուգման պետք է յենթարկեն արտադրական խորհրդակցությունների վերակառուցման ուղղությամբ կատարված աշխատանքը։ Բոլոր այն տեղերում, վորտեղ այդ աշխատանքը չի կատարված, այդպիսին իսկույն սկսել և վերջացնել մինչև հոկտեմբերի 10-ը։

Միությունների կենտվարչությունները կամ-այի նկատմամբ մշտական և կենդանի ղեկավարություն ցույց տալու համար իրենց աշխատակիցներին պետք է ամրացնեն առանձին ձեռնարկություններին։

15. 1931 տարվա արդֆինպլանների կատարման համար պայքարելիս, մյուս խնդիրների կողքին կարևորագույն մի խնդիր է հանդիսանում նաև բանվորական կադրերին արտադրությանն ամրացնելը։ Այս նպատակով անհրաժեշտ է, վոր բանվորների ամրացման բրիգադը լայն կերպով սոցմրցում կազմակերպի բանվորների առանձին ցեխերի ու խմբակների միջև։

Դրանից բացի, բրիգադներն իրենց աշխատանքի ընթացքում պետք է յերևան հանեն բանուժի հոսունության պատճառները և այդպիսիք վերացնելու համար մի շարք կոնկրետ միջոցներ ձեռք առնեն։

16. 1931 տարվա հանդիպական արդֆինպլանի կամպանիան անցկացնելու համար պետք է մոբիլիզացիայի յենթարկել ֆաբրիկա-գործարանային բոլոր ըստորին կազմակերպություններին (կուսակցական, պրոֆեսիոնալ և կոմյերիտական), իսկ ձեռնարկությունների վողջ կուլտ-աշխատանքը ակումբում, կարմիր անկյունում, հանրակացարանում և այլն, առավելագույն չափով պետք է հարմարեցվի կամպանիայի ըսպասարկման խնդիրներին, վորի համար՝

ա) ակումբներում և անկյուններում կազմակերպել հատուկ յերեկոներ՝ կամպանիայի խնդիրների պարզաբանման համար։ Այդ նույն յերեկոներում նշել լավագույն հարվածայիններին, լավագույն հարվածային բրիգադներին ու ցեխերին.

բ) ձեռնարկություններում և հանրակացարաններում կազմակերպել հատուկ զրույցներ, ուժեղացնել պատի թերթերի հրատարակությունը և 3-րդ տարվա դիմավորման հարցերի լուսաբանությունը նրանց միջոցով.

գ) միությունների կենտվարչությունները պետք է սոցմրցում կազմակերպեն իրենց միության կուլտ-հիմնարկների և մյուս միությունների կուլտ-հիմնարկների միջև յերրորդ տարվա դիմավորման լավագույն սպասարկման խնդրի շուրջը։

17. Տեղական մամուլը պետք է լայն չափերով լուսաբանի ինչպես կամպանիայի նշանակությունը, այնպես էլ նրա ընթացքը։

18. Անհրաժեշտ է, վոր ՃՏՄԲ-ն մի շարք ձեռնարկումներ կիրառի անցկացվելիք կամպանիային ինժեներա-տեխնիկական մասսաների մասնակցությունն ապահովելու համար։

19. Բրիգադների աշխատանքի ընթացքում վործարկումները պետք է իրենց նիստերում լսեն ավագ բրիգադիրների հաղորդագրություններն աշխատանքի ընթացքի մասին և ամեն կերպ ոգնեն նրանց գործնական աշխատանքի համար։ Միությունների կենտվարչությունները ևս իրենց նիստերում պետք է լսեն ստորին կազմակերպությունների զեկուցումները կամպանիայի ընթացքի և նրա ղեկավարության մասին։

20. Բրիգադի յուրաքանչյուր մասնակիցը կարճ կերպով գրի յե առնում, թե ի՛նչ է հանդես բերել և ի՛նչ է արել իր աշխատանքի ընթացքում և այդ գրածը հանձնում է ավագ բրիգադիրին։

Ավագ բրիգադիրն ստուգում է աշխատանքի ընթացքը, վերացնում բրիգադի յուրաքանչյուր անդամի աշխատանքում առաջացած դժվարությունները և բրի-

գադի նյութ է հրավիրում, վորտեղ մտքերի փոխանակության հետևանքով կազմվում են բրիգադի յեզրակացությունները:

Բոլոր բրիգադների աշխատանքը վերջացնելուց հետո, գործարկոմն ընդհանուր զեկուցում է կազմակերպում՝ հանդիպական արդֆինպլանի կամպանիայի, ինդուստրացման որվա անցկացման ու «Հնգամյակը չորս տարում» փոխառության իրացման ընթացքի, յեզրակացությունների ու արդյունքների մասին և այն դնում համագործարանային ժողովի կամ կոնֆերանսի քննությանը, վորից հետո ամբողջ մատերիալը տրվում է միության կենտվարչության:

21. Հիմնվելով տեղերից յեկած այս նյութերի և իրենց սեփական դիտողությունների վրա, միությունների կենտվարչությունները ՀԱՄԽ-ին են հանձնում իրենց հաղորդագրական տվյալները վոչ ուշ, քան հոկտեմբերի 20-ը:

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0198350